


ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ



իշնադարյան հայ գեղարվեստի պատմության մեջ ուրուցն տեղ է գրավում հայ եկեղեցական երաժշտությունը:

Արվեստի այս ճյուղը զարգանում է լլլսափորամբ վանքերում: Արանցից հայտնի են Կարմիր վանք, Արքակաղին, Դրազարկ, Սկեվռոս և այլ վանքերը Կիլիկիայում: Այսուղի երևան են վալիս առաջադիմ գաղափարներով տոգորված, հայ գրականության ու արվեստի զարգացման նախանձախնդիր պայծառ դեմքեր, որոնք իրենց ստեղծագործություններով զարկ են տալիս ժամանակի կուլտուրական շարժմանը:

Խորինյանց գերիշխանության պատմաշրջանն է դա: Հայ գրականությունն ու արվեստն առանձին փայլ են ստանում զիսավորամբ 12—14 դարի կիսում: Այդ շրջանում ծաղկում է նկարչությունը, ժանավանդ մանրանկարչությունը, ժամանակաշրջանի տաղանդավոր նկարիչները՝ Թուրու Շոսլին, Գրիգոր Երեց, Խօնատիոս, Արքիս Պիծակ իրենց վրձինով ու գրչով մանրանկարչության, գեղագրության և գրչության արվեստները հասցնում են նախանձելի բարձրության:

Նույն դարաշրջանում առանձին փայլ է ստանում գեղազարդ քանդակագործությունը, որ իր ուրուցն ոճով պատվավոր տեղ է դրավում հայ ճարտարապետության վերածնության մեջ:

Ահա նույն ժամանակաշրջանումն էլ հայ երաժշտակետները ձայնագրում են մեկը մյուսից գեղեցիկ երգեր, կիրտում վլսավորամբ հայկական հարազատ ոճով և զարկ տալիս հոգևոր երաժշտության: Այդ ստեղծագործություններից, զարգանաներից հետո, առանձնապես ընդգծելի են վանձերը: Դրանք կրոնական այն բանաստեղծություններն են, որոնք իրենց բովանդակությամբ արտահայտում են մաղթանք կամ ներողում են Փրիստոնեությունը տարածող դրոշակակիրներին: Այդ երգերում

տեսնում եք նաև կրոնական որմէ նշանավոր տոնի պատկերը: Առհասարակ գանձերն իրենց բնույթով հանգավոր, պատմական, սեղմ բովանդակությամբ հյուսված երգեր են¹⁾, որոնց հավաքածուները կոչվում են զանձարան: գանձարանի ամենամին մի օրինակը մինչև օրս առանձին խնամքով պահպում է Վենետիկի Ս. Ղաղարի Միհիթարյան Միհաբանության վանքի մատենադարանում: Դա մեկն է 1371 թվականին գրված այդ հազվագյուտ գանձարանից, որ իր բովանդակությամբ պատմում է 14-րդ դարի կրոնական պոեզիայի հիմնական գծերի մասին:

Հնագույն ձեռագիրների զարդն է կաղմում, գանձերից հետո, կրոնական բանաստեղծության նաև մի այլ տեսակը: Դրանք՝ տաղերը, մեղեղիներն ու եղիցիներն են, որոնց մեջ տեսնում ենք հայ ժողովրդի կրոնական զերմ զգացումները, վառ հուզերը և հոգեկան անկեղծ ապրումները:

Գանձերը, տաղերը, մեղեղիները և եղիցիները²⁾ կաղմում են 12—15 դարաշրջանի հայ երաժիշտների ստեղծագործության գլխավոր ժանրերը: Դա ժամանակի հրամայողական պահանջն էր: Հայ կոմպոզիտունները իր ժամանակին ձայնագրել են պետական այդ ստեղծագործությունները և հետագա սերունդներին ժառանգություն թողել հայ արվեստի այդ թանգարժեք արտադրությունները:

Երաժշտական տեսակետից այդ ստեղծագործությունները ոչ միայն հետաքրքրական են, այլև կառուցվածքով, եղանակների գունազեղությամբ ու ոճով առանձին արժեք:

1) Զպետք է մոռանալ, որ երդ նշանակությամբ էր գործածվում Կիլիկյան շրջանում գանձ բառը:

2) Նշենք, որ ձեռագիր ձայնագրված ժամանակը երաժշտական խագերությամբ արտահայտում է բանանցքներում գրված են այլ և այլ եղանակների անունները ութը ձայնի բանմումներվ:

են ներկայացնում։ Ավելին։ Հայ եկեղեցական կան երաժշտության արվեստի մեջ այդ երգերից շատերն ուշագրավ են նրանով, որ արտօնայտված են նույրը արվեստով, ի-րենց ինքնուրուցն ոճով զուտ հայկական, բնույթի բախտով։ Այդ տեսակետից հարացած դրույթ ունեն։ Այդ տեսակետից հարացած նյութ են մատակարարում հայ երաժշտության ապագա զարգացման և երաժշտական այլ ստեղծագործությունների, ինչպես՝ օպերաների և սիմֆոնիաների համար։

Կամ մի այլ կարևոր հանգամանք է Անդրեակի է, որ հայ եկեղեցական երաժշտությունը, որքան նրա մեջ պահպանված են հայ հեթանոսական երգերի, ինչպես և հետագայում նաև հունական կամ արաբական երաժշտության աղոտ հետքեր, այնուամենայնիվ նույնքան եկեղեցական երգերով, գլխավորապես գանձերով, տաղերով, մեղեդիներով, առավելապես, եթե ոչ քացառապես, հայկական է։ Ահա թե ինչու այդ ստեղծագործությունների մեջ խորասուզ վոր մասնագետ արվեստագետը գտնում է ոչ միայն միջնադարյան հայ երաժշտության հարստության պատկերը, այլև ծանոթագրության է կոմպոզիտորական տեխնիկայի և այն անհրաժեշտ ձևերի ու կառուցվածքի հետ, որոնք կազմում են հայկական հնագույն երաժշտության էական և առանձնահատուկ գծերը։

Պիտի ընդգծել նաև մի այլ հանգամանք, որ եթե մեր շարականների եղանակները կերտված են բյուզանդացիներից փոխառնված եկեղեցական ութ արմատական ձայների վրա, ապա գանձերը, մեղեդիներն ու տաղերը առավելագույն շափով հորինված են ինքնուրուցն մոտիվներով։ Նրանք խորապես կապված են հայկական ժողովրդական երաժշտության հետ, նրանց ակոնքը հանդիսանում են հայ ժողովրդական աշխարհիկ երգերը։

Հայ հոգևոր երաժշտության մելոդիկ գիծը պոետական խոսքի հետ այնքան ներկաշնակ է հյուսված, որ դժվար է որևէ սահման դնել նրանց միջև։ Այս եղանակները շատ հստակ ու գեղեցիկ արտահայտում են երգերի բովանդակությունն ու տրամադրությունը, միաժամանակ ցայտուն կերպով դրսուրում հայ ժողովրդական քնարական ստեղծագործության բարձրարվեստ կառուցվածքը։

Այս երգերի մեջ շարադրման ձևերը, նըրանց հարմոնիկ հնչյունները, դույները, զարդախաղերը, շափերը, շեշտերը կազմում են մի ներդաշնակ ամբողջություն և ցուցադրում միջնադարյան հայ կոմպոզիտորների ստեղծագործական բարձր տաղանդը։

Այս երգերի կոմպոզիցիայի հարմոնիան պահպանում է հայկական եկեղեցական երաժշտության ողջ կոլորիտը։ Նրանք իրենց բնույթով համակում են մարդուն անբացատրելի թախտով ու վշտով։ Դանձերը, տաղերն ու մեղեդիները զարեր շարունակ պահպանել են իրենց արվեստի թարմությունն ու թովշությունը։

Ովքեր են միջնադարյան հայ եկեղեցական երաժշտության լավագույն ներկայացուցիչները։ Հայ դրականության և արվեստի պատմությանը հայտնի են այդ սակավաթիվ ներկայացուցիչների անունները։ Հայ գրականության պատմությունը մինչև այսօր մանրամասնուրեն չի լուսաբանել նըրանց գործունեությունը, իսկ շատերը դեռևս մնում են անհայտության մեջ։

Հայ եկեղեցական երաժշտության այդ սակավաթիվ ներկայացուցիչների մեջ փայլում են Խաչատուր Տարոնեցին, Ներսես Շնորհալին, երաժշտագետ Հովսեփը, երաժիշտ Թորոսը, Ստեփանոսը և այլն։

ԽԱԶԱՏՈՒՐ ՎԱՐԴ. ՏԱՐՈՆԵՑԻ

13-րդ դարի քաղաքական անցքերը՝ թարարական արշավանները և հայ ժողովրդի թշքառություններն արձանագրող հիրակոս Դանձակեցումը ենք պարտական, որ ընդգծել է մեր այս խորհրդ արվեստագետի անունը։ Դա Խաչատուր Վարդապետ Տարոնեցին է։ 12-րդ դարի առաջադեմ, լուսավոր այդ հոգեւորական մեկն և դարաշրջանի իր կողման բարձրության վրա կանոնած այն պայծառ դեմքերից։ որ բայցում է անսայթաք պարտականության գիտակցության և անսահման նվիրվածության ճանապարհով։ Սակայն մի այլ բնորոշ և կեղծիկ գիծ է ավելի բարձրացնում և նրա հասարակական դեմքը։ Դա նրա երաժրուտական խոշոր ձիբը և Ռժուած լինելով արվեստի փայլուն տաղանդով Տարոնեցին զրայլվում է կրոնական երգերի եղանակներով և իրեն նվիրում պատմաշըրջանի հոգմուր երաժշտության վերածության գործին։ Նրա առաջ ծանրանում է մի հրատապ ինդիքը՝ եղանակները ձայնագրելու, աղավաղումից ազատություն և անհետ կորստից փրկելու համար դասնել գործնական մի միջոց։ Այս վեհ նպատակի իրադրության համար նա բնտրում է խազերի սիստեմը։ Խաչատուր Տարոնեցու անունը կապված է հայկական հին խազերի շահեկան և հետաքրքիր նուագրության վերջնական կազմակերպման հետ։ Միջնադարյան հայ եկեղեցական երաժշտության մեջ մի կոմպոզիտոր այնքան մեծ հեղինա-

Հովիտյուն և համբավ չի գայելում, որքան
Տարոննեցին: Նա իր դարի ոչ միայն լավա-
գույն հոգմարականներից մեկն է, այլև իր
ժամանակի տաշանդավոր նորագույնը, որ
Հայտնաբերում ու դորժադրում է Հայ երա-
ժրշտական խաղիքը՝ Հայ երածտական
նշանագրերը և ուսում այն ամուս պատ-
վանդանը, որի վրա Հետապայում կառուց-
վում ու զարգանում է Հայ նկելցական
երաժշտությունը: Տարոննեցին առաջին ան-
գամ 12-րդ դարում ձայնագրում է և գրի
առնում շարականներ, Հոգևոր այլ երգեր
և ավանդ թողնում ապագա սերունդներին:
Իր ստեղծագործությունների մեջ նա երե-
փուն է գալիս իր ինքնատիպ արվեստով և
նորանոր որոնումներով, Հանդես է գալիս
որպես վարպետ և կատեւութեածիշտ, որը
փալլում է իր ուրույն ոճով, բազմերանդ
ութմով և գեղարքվեստական բարձր մշա-
կույթով: Հայ եկեղեցական երաժշտության
մեջ Տարոննեցու ինքնատիպ արտահայտու-
թյուններից մինը նրա ստեղծագործական
անմիջականությունն է ու խորությունը.
Նրա այս երգերը միջնադարյան հոգևոր
երաժշտության համար իրար նոր երևույթ
անդաման նշանակացից են և ուշադրու-
թյան առօսանի:

12-րդ դարի Հայ եկեղեցական երաժրշտության մեջ Տարոննեցին որպես եկեղեցական երգերի հորինչ և ձևակերպող գրավում է խոշորագույն ու պատվավոր տեղունակ բարձր ստեղծագործական տաղանդի մի նմուշն է «Խորհուրդ խորին»-ը, որ հոգևոր երգերի մեջ համարվում է գաղաթ-նակետ:

ԵՐԱԳԾՏԱԳԵՏՆԵՐ ՆԵՐՍԵՐ ՇՆՈՒՐԱԿԻ

Միջնադարյան Հոգևոր երաժշտության
պատմության էջերն արձանագրելիս պիտի
նկատել մի կոմպոզիտորի պայծառ դեմ-
քը, որ նույնպես իոյ ստեղծագործություն-
ներով դարկ է տվել հայ երաժշտական
արվեստին: Դա 12-րդ դարի ամենափայլլուն
արվեստագետը, Ներսես Շնորհալին է,
(1102—1173), որ իր եռանդուն ու բեղմնա-
գոր գործունեությամբ առանձնահատուկ
տեղ է գրավում հայոց եկեղեցական պատ-
մության մեջ՝ ընդհանրապես և գրականու-
թյան մեջ՝ մասնավորապես: 12-րդ դարի
հայ գրականության պատմության մեջ նա
հոչշակած է որպես խոշորագույն բանաս-
տեղծ: Այդ ժամանակաշրջանի հայ քեր-
թողական արվեստի մեջ նա փայլում է իր
բազմաթիվ պոետական ստեղծագործու-
թյուններով, որոնց մեջ հայտնի են «Հիսուս
որդի», — «Բան հավատո», «Ողբ եղիսիո» և

ալլն: Սակայն, Ծնորհալու ստեղծագործական արժեքը նաև բարձրացնում է նրա հորինած շարականները, տաղերն ու դանձերը, Ներսն Ծնորհալին զրել է «Առավոտ լուսո», «Նայեաց սիրով», «Աշխարհ ամենայն» և այլն եկեղեցական երգերը, Նրան կերպվում են նաև շարականների մեջ գործածված խաղերը, որոնք շարականներին տալիս են որոշ երանգ:

ԵՐԱԺԴՏԱՊԵՏ ՀՈՎՄԵՓ

Որբան աղքատ են միջնադարի հայ երաժշտության պատմության մասին հաղորդ՝ ված վավերական տոլյալները, նույնագույն խոսուն են հայ ձեռագիր տաղարանների միքանի հիշատակարանները, որոնք մինչև օրս խնամքով պահպանել են մի քանի հայ երգահանների պայծառ անունները, որոնք իրենց ատեղծագործություններով զարկ են տվել միջին դարի հայ երաժշտական արվեստին։ Ահա այդ նշանավոր դեմքերից մեկն է Երածշապետ Հովսեփիր։ Նրա անունը դարեր շարունակ պահվել է մի երկու հեռագործ, չնայած հայ մատենագրության պատմության մեջ չի արձանագրված նրա անունը։ Հովսեփի մասին չի հիշատակվում նաև Սպիրիդոն Մելիքանը իր ուլուրվագիծ հայ երաժշտության պատմության մեջ, չնայած այդ արժեքավոր գրքույթը խոսում է ամենահին ժամանակներից մինչև մերօների երաժշտական արվեստի պատմության մասին։

Կենսադրական տեղեկություններ շկան
Հովսեփի երաժշտագետի մասին: Հայտնի չէ
նույնիսկ նրա ազգանունը: Միայն 1241
թիվն գրված մի ձեռագիր Տաղարանի հի-
շտակարանում, այն էլ շատ սեղմ, գրտ-
նում ենք որոշ տեղեկություններ, որոնցից
պարզվում է, որ նա իր ժամանակի ստեղ-
ծառադրության համար մենք ենք:

σωφροσύνη ορθαστρούσε αρρεγείς πάντας ή σωλήνας.
Այս տաղանդավոր երաժշտագետի հայտնության համար նախ պարտական ենք Փարփիհ նախսկին կայսերական մատենադարանի թիվ 50 (հին ցուցակով) Տաղարանին: Դա կրոնական նյութեր պարունակող ամենահին տաղարաններից մեկն է, որի հիշատակարանը վերջանում է հայկական երաժտության պատմության համար առանձին արժեքով ունեցող հետևյալ տողեռով.—

«Կատարեցաւ Երգարանս Տաղաց ձեռ-
ումքը Յովկհաննեսի յետին և յոդնամե-
դի, ի թուականիս Հայոց ՈՃՂ (690 +
551=1241) ի Վանս մեծ ուժատի և
Հոշակաւոր անապատի Դրազարկ կո-
չեցեալ... գտեալ աղեկ աւրինակ (օրի-

նակ) յուժ գեղեցիկ զառն միոյ երածշտապետի Հուսեփի կոչեալ և կարի հասու ամենայն իմաստից երաժշտից մինչև ի բաւանդակն, որ յաւուրսոչ գտանի հանգոյն:

Հ. Բարսեղ Վ. Սարգսյանի խմբագրած «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» բանասիրական արժեքավոր դրբի թ. հատորում կարդում ենք, որ Վենետիկի Միտիթարյան միաբանության մատենադարանի «Հավատումն բանից նախնեաց Ա» ձեռագրում կամի տաղարան, որի գրիչն է դարձյալ Հովհաննեսը, 1241 թվին գրված այդ ձեռագրի հիշատակարանում նա թախանձում է ընթերցողներին՝ հիշել «կարի հասու ամենայն իմաստից երաժշտից» Հովսեփի երաժշտապետին:

Հիշյալ երկու պատմական ձեռագրերի հիշատակարաններից պարզվում է, որ՝

1) երաժշտապետ Հովսեփին ապրել է և ստեղծագործել 13-րդ դարի առաջին շրջանում, Կիլիկիայում, Հեթումի թագավորության ժամանակ,

2) արվեստագետն ունեցել է երաժշտական բարձրագույն կրթություն և իր ստեղծագործական հարուստ հույսերով, նուրբ ճաշակով և խոր ապրումներով՝ հանդիսացել է իր դարաշրջանի նշանավոր երաժշտապետը.

3) իբրև ստեղծագործող նա զբաղվել է հայկական եղանակների ձամբագրությամբ և որպես հմուտ երաժիշտ մեծ համբավ է վայելել ժամանակակիցների մեջ.

4) նա եղել է մեկը 13-րդ դարի այն լավագույն երաժիշտներից, որոնք իրենց կյանքն ամբողջապես նվիրել են հայ եկեղեցական երաժշտության վերելքին:

Վենետիկի Միտիթարյան միաբան նշանավոր հայտիտ և բանաստեղծ Հ. Արսեն Բարպատունին (1790—1866) վերջին անդամ պրտագրում է Վենետիկի ձեռագիրը և երաժշտապետ Հովսեփի մասին գրված տողերի դիմաց, լուսանցքում վկայում է. որ «պարսիկ ձայն», «ասորի ձայն»-եղը պարսկական ու ասորական եղանակներ են, որոնցով դրազվել է երաժշտագետը:

ԵՐԱԺԻՇՏ ԹՈՐՈՍ

Երաժիշտ Թորոսը ապրել և գործել է 13-րդ դարի վերջին և 14-րդ դարի առաջին շրջանում: Նրա գործունեության վայրը եղել է Դրազարկի պատմական լմանքը: Կիլիկիայի հին մայրաքաղաք Սսի սահմանում, անտառախիտ մի ձորում բարձրացել է ժամանակի լուսավոր կենտրոններից մեջ՝ Դրազարկի մենաստանը, որին ձեռագիր

մատյանների հիշատակարանները դրվատում են մեծ, ականավոր, հողակավոր, գերաճոշակ, սուրբ, հրեշտակաբնակ ածականներով: Վանքի պատմության ամենափայլը շրջանը կազմում է 12—14-րդ դարի կեսը: Այդ ժամանակ է, որ մենաստանի իր կողման բարձրության վրա կանոնած միաբանության շարքում փայլում են զրական-գեղարվեստական ձիրքերով օժտված հոգուրականները: Վանքի միաբանների շարքում հանդես են գալիս նկարչական հարուստ տվյալներով օժտված խոշոր արվեստագետներ, որոնք իրենց հմուտ վրձինով առանձին փայլ են տալիս մանրանկարչության արվեստին: Այդ տաղանդավոր նկարիչների մեջ առաջնակարգ տեղ է գրավում մի համեստ, բայց փայլուն արվեստագետ, մի քահանա: Դա Սարգսի Պիծակն է, 14-րդ դարի ամենատաղանդավոր նկարիչը, ամենափայլում ծաղկողն ու ոսկողը: Իր գեղարվեստական ստեղծագործություններով զարդարում է նա բազմաթիվ ձեռագիրների էջերը, որոնցից շատերն իրենց ինքնատիպ ոճով, նրբությամբ ու բորությամբ այսօր իրենց վրա են կենտրոնացնում ամեն մի գեղարվեստագետի հայացքը, հիացմունք պատճառում և պատմում նրա վարպետ վրձինի, նկարչական նվաճումների մասին:

Նույն դարաշրջանում Դրազարկի վանքի միաբանների շարքում հայտնի է դառնում մի երաժշտ, որ նպաստում է իր ժամանակի երաժշտական արվեստի զարգացմանը: Դա թորոս երաժիշտն է, որի մասին Հ. Է. էփրիկյանի «Հնաշխարհիկ բառարան»-ի 593-4-րդ էջերում կարդում ենք հետևյալ բնորոշ տողերը.

«...Դրազարկի վանքն, անշուշտ, իր դրից պատճառաւ, և կամ անոր մեկ մասն կոշված է Փոստ վանք. վանքու կոշւած է նաև Ալագ վանք: Վանաց միաբաններէն հիշելու արժանի է նախ Թորոս երաժիշտը կամ դասապետ, որ 1307-ին կան Գ-էն և Հեթում Բ-էն դեսպան զրկւած էր Անգլիոյ եղվարդ Բ. թագաւորին: Հիշենք նաև սրբաւոր քահանայն Սարգսի Պիծակ, որ ժամանակին հայ նկարչաց, ոսկողաց և ծաղկողաց մեջ առաջին համարիլ Դրազարկ շէն և բարգաւաճ եղած է գրեթէ ժի դարու սկզբէն մինչև ժի դարու է կէսը (տես նաև «Սիսան» (230—236):

ԵՐԱՔԻՇՏ ՍՏԵՓԱՆՆՈՒ

Բարձրագույն կրթությամբ և գիտությամբ զինված իր ժամանակի կուտուրական դեմքերից մեկը, որ հանրային կյանքում փայլում է նախ որպես փիլիսոփա: Սակայն նրա հասարակական դերն առանձին նշանակություն է ստանում նրանով, որ նա օժտված լինելով ձայնական հարուստ և երաժշտական մեծ ընդունակությամբ զարկ է տալիս իր ապրած դարաշրջանի երգեցողության և երաժշտական արվեստին:

Այս փիլիսոփա, երգիչ, երաժշտի անունն առաջին անգամ կարդում ենք Հ. Առոնդ Ալիշանի «Ընորհալի և պարագա իւրա» խորագրով գրության 88-րդ էջում: Ալիշանը գրում է, թի Ստեփաննոս անունով մի երաժիշտ քան և վեց եղանակ է հորինել բնակիան իրերի և կենդանիների ձայնից առնելով:

Փաստն այն է, որ այդ 26 եղանակը Ստեփաննոսը ոչ թե հորինել է, այլ թարգմանել է: Հ. Ալիշանի հազորքած սխալ տեղեկությունը մեծանուն երաժշտագետ Կոմիտասը դեռ 1894 թվին «Արարատ»-ում տպած իր «Հայոց եկեղեցական եղանակների» խորագիրը կրող անդրանիկ հոդվածով սրբագրել է, ընդգծելով՝ «հետևյալը».

«Պատահաբար մեր ճերքն անցավ մի ճեռագիր, որի մեջ կար մի անհայտ գրչի գործից մի գլուխ՝ «Բան յաղագս ձայնից թէ ուստի գտաւ» վերտառությամբ, բոլորովին անկախ գորի բռն նյութից: Այս կտորը բավական շահավետ տեղեկություններ է հաղորդում, որոնցից մեկն է ոմն Ստեփաննոս փիլիսոփա երաժշտի մասին: Մեր կարծիքով Հ. Դ. Ալիշանի հիշած Ստեփաննոս երաժիշտը նույն ինքն այս անձն է, բայց ոչ թե հորինել է հիշյալ քան և մեց եղանակը, այլ թարգմանել է երանելի թարսեղի գրությունից: և որ եղանակների թիվն է քան և շորա»:

Նկատենք, որ Կոմիտասի միջոցով «Արարատ»-ում 1894 թվին արդեն լույս տեսած ձաղագս ձայնից թէ ուստի գտաւ շահեկան այս հատվածը Հաղություն Քյուրտաւանը, որպես անտիպ նյութ, տպագրել է Փարիզի «Անահիտ» ամսագրում (1935 թ. թիվ 1-2 էջ 321) ընդգծելով «հետևյալ կտրուկ տողերը»:

«Զեմ կարծեր, որ այլուր հրապարակված ըրան այս երկու հատվածները, որ աղանդ են ուշագրության»:

Անշուշտ, եթե Քյուրտայնը ծանոթ լիներ հայ մատենագրության, ոչ տպագրված նոր ձևով

մի նյութ անտիպի անվան ներբո լույս կրնծայեր «Անահիտ»-ում և ոչ ել սխալ կարծիք կհայտներ: Բայց էականն այժմ այդ չէ, այլ այն, որ Ստեփաննոս երաժշտի՝ 24 եղանակի թարգմանության կարևոր խնդրի լուսաբանության համար պարուական ենք տաղանդավոր քանասեր— երաժիշտ Կոմիտասին:

Միջնադարից անցնում են 500 երկար ու ձիգ տարիներ և աճա 19-րդ դարում նորից հրապարակի վրա է դրվում ձայնանիշ ունենալու, շարականի երգեցողությունը դյուրացնելու և եկեղեցական երաժշտությունն աղավաղումից ու կորատից փրկելու հրատապ հարցը: Այս անգամ ասպարեզ է գալիս երաժիշտ Թարա Համբարձում Սարգսյանը (1768—1839), որ ամբողջապես նիմիրվում է այդ վեց նպատակի իրագործմանը նա, հույների հետևողությամբ: Հնարում է գրության մի նոր սիստեմ: Ընտրում է հայկական հին խազերից 20 հատ, տափս է նրանց ուրույն նշանակությունն և հնարում արդի ձայնանիշներն ու ամանակները 1839 թվին: Այդ ամանակների կամ տեղության նշանների թերին լրացնում է Թարա Համբարձումի աշակերտներից Արհստակես Հովհաննիսյանը 1878 թվին: Այդ աշխատանքը շուտով այնքան շերմընդունելություն է գտնում, որ ժամանակի հոգեոր դասը ոսոշում է հենց այդ նորա ներով ձայնագորել տալ ամբողջ հոգեսր երաժշտությունը: Հանգամանքները, սակայն, չեն նպաստում և ծրագիրը մնում է սոսկ գերմ ցանկություն: Բայց այդ դրությունը երկար չի տևում: Եղբ էջմիածնի կաթողիկոսական գահին բազմում է Գևորգ Դ-ր, 1873 թվականին նա էջմիածնի հրավիրում պոլսահայ մի երաժշտի Նիկողայոս Թաշեյանին և նրան հանձնում առաջադրված ծրագրի իրագործումը: Բաշճանն առաջին առաջին անգամ հայկական նորաներով ձայնագրում է բոլոր հայ շարականները, ժամագիրը և պատարագը, որոնք տպագրում են մինչև 1875 թվականը: Դա հոգեսր երաժշտության վերածնությունն է:

Հոգեսր երգերի մշակումը գեղարվեստական նոր երանդ է ստանում, եղբ հրապարակ են գալիս տաղանդավոր երաժշտագետ Մակար Եկմալյանը (1856—1905) և Կոմիտասը, որոնց ներդաշնակած պատարագը լավագույն կոթողներից մեկն է հոգեսր երաժշտության մեջ: